Վահե
ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ): 1994-1997 թթ. սովորել է ԵՐԺՏԻ ասպիրանտուրայում՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ: 1998 թ. առայսօր զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ տընտեսագիտության տեսության ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ որպես դոցենտ: 2018 թ. մինչ օրս ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է: Հեղինակ է շուրջ 35 գիտական աշխատանքների:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *տնտեսական անվտանգություն, տնտեսական ցուցանիշներ, սոցիալական ցուցանիշներ, համակարգ, շեմային մեծություն*

Հոդվածում հեղինակն անդրադառնում է Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրներին: Նրա համոզմամբ՝ տնտեսական անվտանգության ապահովման պետական ռազմավարությունը պետք է հիմնվի ըստ որակական և քանակական որոշակի ցուցանիշների և չափորոշիչների սահմանված միջոցառումների, ինչպես նաև կառուցակարգերի վրա: Ընդ որում, նրա կարծիքով, տնտեսական անվտանգությունը գնահատելիս կարևոր են ինչպես ընտրվող ցուցանիշների համակարգը, այնպես էլ դրանց շեմային մեծությունները:

ՀՀ-ում տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, հատկապես մակրոտնտեսական կառավարման առանձնահատկությունների տեսանկյունից, դեռևս չեն դարձել լայն ուսումնասիրության առարկա և կարիք ունեն հետագա վերլուծության ու ընդհանրացման: Այդ հարցերն առանձնահատուկ կարևորություն են ստանում պետական կառավարման, տարածաշրջանային զարգացումների, գլոբալացման և վերջինիս ներպետական ազդեցությունների առումներով:

Տնտեսական անվտանգության պետական ռազմավարությունը պետք է մշակվի որոշակի միջոցառումների, կառուցակարգերի միջոցով, որոնք սահմանվում են ըստ որակական և քանակական ցուցանիշների ու չափորոշիչների:

Տնտեսական անվտանգությունը գնահատելու համար կարևոր են ինչպես ընտրվող ցուցանիշների համակարգը, այնպես էլ դրանց սահմանային կամ շեմային մեծությունները: Տնտեսագիտական գրականության մեջ շատ

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ տնտեսական անվտանգության հիմնական ցուցանիշների շարժընթացը 2015-2019 թթ.[1]

		2015	2016	2017	2018	2019	Փաստ. միջին	Փաստ. (միջին) / շեմային
Տնտեսական աճ	նվազագույնը՝ 3%	3.2	0.2	7.5	5.2	7.8	**4.8**	*1.6*
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	նվազագույնը՝ 2250 $	3512	3533	3887	4193	4620	**3949.0**	*1.8*
Գնաճի միջին մակարդակ	առավելագույնը՝ 10%	3.7	-1.4	2.6	1.8	1.4	**1.6**	*0.2*
Փողի զանգվածը (M2) ՀՆԱ-ի նկատմամբ	նվազագույնը՝ 50%	36.4	42.5	46.0	45.7	47.0	**43.5**	*0.9*
Բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ	առավելագույնը՝ 5%	4.8	5.5	4.8	1.6	1.0	**3.5**	*0.7*
Արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ	առավելագույնը՝ 25%	40.9	45.6	47.6	44.6	42.3	**44.2**	*1.8*
Ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ	նվազագույնը՝ 25%	20.7	18.0	19.3	22.4	17.4	**19.6**	*0.8*
Ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին	առավելագույնը՝ 35%	30.7	31.0	35.5	40.0	40.3	**35.5**	*1.0*
Արտահանված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին	նվազագույնը՝ 26%	14.1	17.0	19.4	19.4	19.3	**17.8**	*0.7*

հաճախ հանդիպում ենք Ս. Գլազևի առաջարկած տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգին և համապատասխան շեմային մեծությունների[2]: Վերլուծության համար հիմք ընդունելով այս մեթոդաբանությունը՝ ներկայացնենք վերջին տարիներին ՀՀ տնտեսական անվտանգության հիմնական ցուցանիշների շարժընթացն ու դրանց շեմային մեծությունները (աղյուսակ 1):

Ինչպես երևում է բերված տվյալներից, տնտեսական անվտանգության հիմնական ցուցանիշներից տնտեսական աճը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, գնաճի միջին մակարդակը, բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ շեմային մեծությունների տիրույթում են, իսկ փողի զանգվածը (M2) ՀՆԱ-ի նկատմամբ, արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ, ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ, ներմուծվող և արտահանվող ապրանքների ու ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին կամ ցածր են շեմային մեծությունից (նվազագույնի դեպքում), կամ գերազանցում են դա (առավելագույնի դեպքում):

Մասնագիտական գրականության մեջ

[2] Աղյուսակը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015, 2016, 2017, 2018, 2019 թթ. հունվար-դեկտեմբերին:

[3] Глазьев С. Ю., Основа обеспечения экономической безопасности страны: альтернативный реформационный курс, Российский экономический журнал. 1997. № 1.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տնտեսական անվտանգության հիմնական ցուցանիշների փաստացի միջինի և շեմային ցուցանիշների հարաբերությունը[3]

շատ հաճախ տնտեսական անվտանգության ցուցանիշներին վերագրվող «շեմային» և «սահմանային» կամ «առավելագույն սահմաններ» եզրույթները գործածվում են որպես հոմանիշներ[4]: Շեմային մեծություն է համարվում ցուցանիշի այն սահմանը կամ մակարդակը, որից շեղվելու դեպքում երկրի տնտեսական անվտանգության հիմնախնդիրների լուծումը դառնում է օրակարգային հարց: Որպես տնտեսական անվտանգության ցուցանիշների շեմային մեծություններ են ընդունվում համապատասխան ցուցանիշների միջին համաշխարհային մակարդակները (աղյուսակ 2 և գծապատկեր 2):

Տնտեսական անվտանգության կարևոր չափորոշիչներ են նաև սոցիալական ցուցանիշները:

Մտահոգիչ է նաև տնտեսական անվտանգության գրեթե բոլոր սոցիալական ցուցանիշների մեծ շեղումը շեմային արժեքներից (աղքատության մակարդակ, գործազրկություն, սոցիալական անհավասարության դեցիլային գործակից, տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի բավական բարձր մակարդակ ՀՆԱ-ում, հանցագործության մակարդակ):

Տնտեսական անվտանգությունն առավելագույնս ապահովված է, եթե բավարարված են բոլոր ցուցանիշների շեմային մեծությունները: Միաժամանակ, արձանագրենք, որ ներկայում նույնիսկ զարգացած երկրները չեն կարողանում ամբողջությամբ ապահովել տնտեսական անվտանգության հիմնական ցուցանիշների շեմային մեծությունները: Այս տեսանկյունից, առաջատար դիրքերում են ԱՄՆ-ը, Ճապոնիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան:

Նման բազմազան ցուցանիշների առկայությունը պահանջ է դնում տնտեսագիտության առջև՝ մշակելու տնտեսական անվտանգության գնահատման ինտեգրալ ցուցանիշ, որը թույլ կտա կատարել ոչ միայն համեմատական վերլուծություն, այլև առաջադրել տնտեսական անվտանգության մակարդակի կառավարման ու օպտիմալացման խնդիր: Տնտեսական անվտանգության ցուցանիշների համա-

[3] Գծապատկերը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ աղյուսակ 1-ի տվյալները:
[4] Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, Երևան, 2005, էջ 93:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ տնտեսական անվտանգության հիմնական սոցիալական ցուցանիշների շարժընթացը 2015-2019 թթ.[5]

		2015	2016	2017	2018	2019	Փաստ. միջին	Փաստ. (միջին) / շեմային
Գործազրկության մակարդակ	առավելագույնը՝ 10%	18.5	18.0	17.8	20.5		**18.7**	*1.9*
Աղքատության մակարդակ	առավելագույնը՝ 10%	31.8	31.2	27.1	24.5		**28.7**	*2.9*
10% ամենահարուստ և 10% ամենաաղքատ բնակչության խմբերի հարաբերությունը	առավելագույնը՝ 8 անգամ	8.9	8.3	9.9	9.4		**9.1**	*1.1*
Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը ՀՆԱ-ում	առավելագույնը՝ 60%	77.6	76.5	79.3	81.3	83.8	**79.7**	*1.3*
Կյանքի միջին տևողությունը	նվազագույնը՝ 70 տ	75.0	75.0	75.4	75.9		**75.3**	*1.1*
Հանցագործության մակարդակը (հանցագործությունների թիվը 100 հազար մարդու հաշվով)	առավելագույնը՝ 500	521	608	676	751	895	**690**	*1.4*



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Տնտեսական անվտանգության սոցիալական ցուցանիշների փաստացի միջինի և շեմային ցուցանիշների հարաբերությունը[6]

[5] Աղյուսակը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015, 2016, 2017, 2018, 2019 թթ. հունվար-դեկտեմբերին:

[6] Գծապատկերը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ աղյուսակ 2-ի տվյալները:

կարգի և ինտեգրալ ցուցանիշի միջոցով հնարավոր կդառնա նաև զարգացման տարբեր սցենարների պայմաններում տնտեսական վտանգների ու ռիսկերի աստիճանի մոդելավորումը, ինչպես նաև դրանց հնարավոր բացասական հետևանքների նվազեցման ու կանխման ուղղությամբ կանխարգելիչ միջոցառումների մշակումը:

Այսպիսով՝ ամեն մի երկրի տնտեսական ռազմավարության առանցքային խնդիրներից մեկը պետք է լինի համապատասխան անվտանգության ցուցանիշների շեմային մակարդակների որոշումը: Դրանք պայմանավորված են տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններով, ռեսուրսային ապահովվածության բնույթով, տնտեսական հարաբերությունների զարգացման աստիճանով և բազմաթիվ այլ գործոններով: Հավելենք նաև, որ որպես շեմային պետք է դիտարկել ցուցանիշների այն մակարդակները, որոնց երկիրը պետք է ձգտի առաջիկա 10-20 տարիների ընթացքում, իսկ կայուն դինամիկ զարգացումից յուրաքանչյուր շեղում պետք է համարել իբրև երկրի տնտեսական անվտանգությանը սպառնացող վտանգ:

Հիմնվելով վերը նշված ցուցանիշների վերլուծության վրա՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ տնտեսության զարգացման և տընտեսական անվտանգության ներկայիս մակարդակները «բավարար» գնահատականի տիրույթում են:

Միաժամանակ, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության մարտահրավերները չեն կարող քննության առարկա դառնալ մեկուսի, ընդհանուր համակարգային մոտեցման համատեքստից դուրս՝ դիտարկվելով որպես սոսկ տնտեսական բնույթի հիմնախնդիրներ: Երկրի առումով, «տընտեսական անվտանգություն» հասկացությունն առավել ընդգրկուն է և, բացի տնտեսական ոլորտից, ուղղակիորեն առնչվում է նաև հանրային բնույթի բոլոր այն խնդիրներին, որոնք կայուն առաջընթացի երաշխիք են:

Հ.Գ. *Աշխարհը թևակոխում է անկայունության նոր փուլ: Գիտնականների մեծ մասը պնդում է, որ COVID-19 համավարակը հնարավոր է՝ շարունակվի երկար տարիներ: Համաշխարհային տնտեսությունը հայտնվել է խոր և երկարաժամկետ ռեցեսիոն պարբերաշրջանում, որն իր տևողությամբ կարող է գերազանցել նույնիսկ Մեծ ճգնաժամը: Այս ամենն ի վերջո կհանգեցնի նրան, որ տնտեսական անվտանգության հետ կապված ռիսկերը ոչ միայն ավելի կսրվեն, այլև, չի բացառվում, կվերաճեն քաղաքական անկարգությունների, բռնությունների և բախումների՝ իրական սպառնալիք դառնալով երկրների ազգային անվտանգության համար:*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, Երևան, 2005 թ.:
2. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015, 2016, 2017, 2018, 2019 թթ. հունվար-դեկտեմբերին:
3. Глазьев С. Ю., Основа обеспечения экономической безопасности страны: альтернативный реформационный курс, Российский экономический журнал,1997.
4. Илларионов А. Н., Критерии экономической безопасности, Вопросы экономики, 1998 № 10
5. OECD, Stiglitz E, Fitoussi J, Durand M, For Good Measure: Advancing Research on Well-being Metrics Beyond GDP, Paris, 2018, https://doi.org/10.1787/9789264307278-en.
6. Akberdina V., Kocherbaeva A., Smirnova O., Methods for assessment of the economic security level in the region. 2018, http://www.revistaespacios.com/a18v39n24/a18v39n24p28.pdf
7. Bijan P. Karimi. Security and prosperity: re-examining the connection between economic, homeland and national security. 2015, https://www.hsaj.org/articles/8069
8. Petrova E., Economic growth and investment activity as basic elements and indicators of economic security and their relationship with national and international security. 2018, https://content.sciendo.com/view/journals/kbo/24/2/article-p76.xml
9. https://scholar.google.com/scholar?start=0&q=economic+security+indicators&hl=en&as_sdt=0,5&as_vis=1

Ваге БУЛАНИКЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

АНАЛИЗ ОСНОВНЫХ ПОКАЗАТЕЛЕЙ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ РА

В статье рассматриваются проблемы экономической безопасности Республики Армения. Отмечается, что стратегия государственной экономической безопасности должна осуществляться с помощью ряда конкретных мер, механизмов, которые определяются на основе качественных и количественных показателей и индикаторов. Для оценки экономической безопасности важны как система выбранных показателей, так и их пороговые значения.

Ключевые слова: *экономическая безопасность, экономические показатели, социальные показатели, система, пороговые значения*

Vahe BULANIKYAN
Senior Researcher at "Amberd" Research Center, ASUE,
PhD in Economics

SECURITY AND CHALLENGES

ANALYSIS OF THE MAIN INDICATORS OF ECONOMIC SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

The paper presents the problems of economic security of the Republic of Armenia. It is mentioned that the state economic security strategy should be implemented through concrete measures, mechanisms, which are defined based on qualitative and quantitative indicators and standards. To assess economic security, both the system of selected indicators and their threshold values are important.

Key words: *economic security, economic indicators, social indicators, system, threshold size*